


hidlength

226



4869

Արմ.

12-1333a

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԽՈՍԵՆ

*Հարգույն տեղի Էմստեռ  
պ. Գ. Խաչբեգույան*

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ


*Խաչբեգույան*

ՍԻՐՈՅ և ԳԱՂԱՓԱՐԻ  
ՍԳԱԻՈՐ ԵՐԳԻԶԸ

*28 հոկտ.*

*1920թ*

1000  
7926  
Գ



Ив. № 17514

Թ Ի Յ Լ Ի Ս  
Տպարան «ԷՍՊԵՐԱՆՏՕ»  
1913

ԱՊՐ  
1914

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՄԻՏԵ




Նոյ. 14



226-2014

ԿՊ 225



Յովհ. Յովհաննիսյան

ՀԱՅ

Արարել էր արևը, որ արեգակն ընդարձակ  
ժամանակ արեգակի խոր արեգակի մեջ, արեգակի մեջ,  
Առաջ Գրեգորիանե շրջանում արեգակի արեգակը,  
Հայրենի էր հարկեր հարգանքներ, խոստովանում:

Արարելու արեգակի, արեգակն ընդարձակ  
ժամանակի մասին և խոստովանում ինչ արեգակ  
Արեգակի արեգակի արեգակի խոստովանում,  
Ինչ արեգակի արեգակի խոստովանում:

Արարել էր արեգակի արեգակի արեգակի  
Ոչ ոք չէր արեգակի արեգակի արեգակի,  
Ինչ ինչ արեգակի արեգակի արեգակի,  
Ինչ արեգակի արեգակի արեգակի...

Այլ արեգակի արեգակի... Ինչ արեգակի և արեգակի  
Ոչ ոք արեգակի արեգակի արեգակի,  
Ինչ արեգակի արեգակի արեգակի,  
Ոչ ոք արեգակի արեգակի արեգակի:

Արարել էր արեգակի արեգակի արեգակի,  
Ինչ արեգակի արեգակի արեգակի,  
Ոչ ոք արեգակի արեգակի արեգակի,  
Ոչ ոք արեգակի արեգակի արեգակի:

19/11/1913  
Հրովհակոբյան

2004

Յովհաննէս Յովհաննիսեանը ծնուել է 1864 թուին, ապրիլի 26: Պոյետի հայրենիքը Վաղարշապատ գիւղն է. նրա հայրը եղել հասարակ գիւղացի-հաց-թուխ. նա իր սկզբնական կրթութիւնը ստացել է գիւղական (հայոց) ծխական դպրոցում, այնուհետև մըտել է (երևի պատրաստուելու համար) այն ժամանակուայ մեր երկրորդ համալսարանական վարդապետի՝ Վահան Բաստամեանի մօտ. միքանի ժամանակ աշակերտելով Վահան վարդապետին՝ մտնում է Երևանի պրոգիմնազիան, որտեղ մնում է մինչև 1877 թիւը. այդ թուին աշնանը նա գնում է Մոսկվա, մտնում է Լազարեան ձեմարանի III դասարանը. 1883 թուին արձաթէ մեղալով աւարտելով իր ուսումը՝ մտնում է այնտեղի պատմա-լեզուագիտական բաժինը, ուր աւարտում է 1888 թուին, 24 տարեկան հասակում, այդ տարին էլ հրաւիրւում է Էջմիածին, Գէորգեան ձեմարան ուսուցչի պաշտօնով. այդտեղից գալով Թիֆլիս՝ միքանի տարի ուսուցչութիւն է անում Ներսիսեան դըպրանոցում, ապա նորից հրաւիրւում է Էջմիածին. սակայն այդտեղից դարձեալ հրաւիրւում է Թիֆլիս Յովհաննէան օրիորդաց դպրոցը տեսչի պաշտօնով, ուր մի տարի պաշտօնակարելուց յետոյ նորից գնում է Գէորգեան ձեմարան, այդտեղ պաշտօնավարում է մինչև 1909 թ. ապա իրանից անկախ պատճառներով բոլորովին թողնելով ձեմարանը՝ մնում է սինոդում լոկ քարտուղարի պաշտօնով, որպիսի պաշտօնը ստանձնած է

եղել դրանից միքանի տարի առաջ : Ահա այն համա-  
նօտ կենսագրութիւնը, որ գրական աշխարհին յայտնի  
է պոյէտի կեանքից :

Այն միջավայրն ու ժամանակաշրջանը ուր և երբ  
ծնունդ են առել Յովհ. Յովհաննիսեանի բանաստեղ-  
ծութիւնները՝ դա ամենքին յայտնի է. դրանցից ա-  
ռաջինը (տեղը) այն վայրն է, որտեղ ապրում էր հայ-  
ազգի պոյէտ և հայ լեզուի ուսուցիչ Սմբատ Շահազի-  
զը, այն է Մոսկվան, Լազարեան ճեմարանը, որտեղից  
բացի Շահազիզից մենք ստացել ենք մեր բազմաթիւ  
գործոյններն ու գործիչները. երկրորդը (ժամանակը)  
ուրա ժողովրդի այն մտաւոր և ուսումնական առաջ-  
խաղացման ժամանակաշրջանն էր, երբ մի կողմից ի-  
րենց երգերը դեռ չէին վերջացրել Ֆրուգն ու նման  
բանաստեղծները, միւս կողմից քնարի ետուն թափով  
երգում էին ժամանակակից անուշ պոյէտները՝ նախ  
Պլեշչեև, ապա Նադսոն : Իսկ հայ մտաւոր կեանքի համար  
էլ այն ժամանակաշրջանն էր, երբ Ս. Շահազիզն արդէն  
հանգստանում էր իր անցեալի դափնիները վրայ, որ-  
պէս և ինքն է երգում. —

«Մեռաւ իմ մուգան. հանգաւ իմ կրակ .

«Անտառը լցուեց չոր տերեւներով .

«Երկինքը ծածկուեց, փախաւ արեգակ,

«Ես էլ չեմ ապրում ուրախ երգերով :

«Եւ արծաթափայլ ջրերի խոխովին

«Այլ ևս չէ խօսում բանաստեղծի հետ .

«Մայր մտաւ ահա և նշոյլ վերջին,

«Հանում եմ զրահս և զէն և զարդեր .

«Յանձնում եմ դրանց մանուկ սերնդին :

Իսկ Գամառ-Քաթիպան՝ գրեթէ թողել էր արդէն  
իր հեգնող գրիչը :

Այդ ժամանակաշրջանն, ինչպէս ասացինք, 80—85

թուականներն էր, որ ինչպէս ճիշտ նկատում է  
Մ. Բերբերեանը սպասում էին, նոր բանաստեղծի.  
արդարև, եկաւ այդ բանաստեղծն իր թարմ ոյժերով,  
նոր երգերով, անկեղծ ոգևորութեամբ, սրաբուզիս մե-  
ղեղիներով, ուրիշ խօսքով ասած՝ նոր ոգով ու նոր  
ուղղութեամբ. նա եկաւ սէր աւետելու և ազգի սուգը  
ողբալու, կոշտացած սրտեր փափկացնելու և գեղեցիկ  
գաղափարներով ոգևորելու. այդ բանաստեղծը Յով-  
հաննէս Յովհաննիսեանն էր, որի գալուստը ողջունեց  
մամուլը միաբերան :

Նոր պոյէտի մեր կեանքում երևան գալը հայ գրա-  
կանութեան այն ժամանակն էր, երբ արդէն վերջանում  
էր մեր նոր գրականութեան շրջանը, որ լի էր ազգայ-  
նական ու հայրենասիրական ուղղութեամբ գրուած-  
քներով և սկիզբն էր առնում նոր ուղղութեամբ, նոր ո-  
գով նորագոյն գրականութիւնը, որի ռահվիրաները կո-  
չուած էին լինելու՝ վիպականի համար Շիրվանզադէն,  
քնարերգականի համար՝ Յովհ. Յովհաննիսեանը :

Եւ արդարև դրանք երկուսն էին, որ 80-ական  
թուականներից սկսեցին գրել համամարդկային ոգով  
ու ուղղութեամբ և հիմք դրին մեր նորագոյն գրակա-  
նութեան : Սօսքը, այս դասախօսութիւնը, Յովհ. Յով-  
հաննիսեանի մասին լինելով պէտք է ասեմ, որ նա  
եղաւ մեր նորագոյն պոյէտների ռահվիրան, ինչպէս և  
վկայում է մեր գրագէտներից մէկը. —

«Այդպիսի ժամանակներումն էր ահա, որ Մօսկ-  
վայում լոյս տեսաւ մօտ. 50 ոտանաւորից կազմուած  
մի գրքոյկ. մի նոր բանաստեղծ էր նրա հեղինակը,  
որ իր առաջին երգերի մէջ իսկ երևան էր հանում  
ժողովրդասիրական գաղափարների ձգտող միտումներ,  
և իր աչքի խփող տաղանդովն ու քնքոյշ թախիծով  
գրաւում էր ընթերցողին : Դա Յովհ. Յովհաննիսեանի  
քնարն էր, ուստի հայ նորագոյն բանաստեղծական գրա-

կանութեան սիւներից մէկը, ընարերգուներից առաջինը»:

Իսկ մի ուրիշ գրագէտ վկայում է, որ Յ. Յովհաննիսեանը մեր գրականութեան մէջ աւագագոյնն է արդէ բանաստեղծների շարքում և շատերի հոգևոր ծնողը:

Եւ արդարև, ինչպէս մի ժամանակ Սերվանտեսից ու Դեֆոյէից յետոյ առաջ եկան մի շարք հետևողներ, նմանութեամբ գրողներ, այնպէս էլ Յ. Յովհաննիսեանից յետոյ 90-ական թուականներում հայ գրականութեան մէջ առաջ եկան մի շարք տաղանդաւոր և անտաղանդ բանաստեղծներ: Մեզանից ճիշտ չէ յիշում այդ թուականը, երբ մեր գրականութիւնը հեղեղուեց բանաստեղծութիւններով. գրում էին ամենքը, ոգևորւում նոր հովերով. այդ գրողների մէջ նրանք, որոնք տաղանդից զուրկ էին՝ անհետ անցան, գնացին, իսկ տաղանդաւորները մնացին, ինչպէս՝ Աղ. Ծատուրեան, Յովհ. Թումանեան, Լևոն Մանուկեան, Ա. Իսահակեան, Յովհ. Կոստանեան, Յակոբ Յակոբեան, վերջերս Շուշանիկ Կուրղինեան, և այլք որոնք, իրենց լիրիկմով Յովհ. Յովհաննիսեանից ծնունդ առած պոյետներ են, թէև տարբեր դեմքով ու տարբեր ոգով:

Յովհաննէս Յովհաննիսեանն իր երիտասարդական հասակի կրթութիւնը ստանալով, ինչպէս ասացինք, այն միջավայրում, ուր մի կողմից հայ լեզու և հայ գրականութիւն ուսուցանում էր պոյէտ Սմբատ Շահազիզը, միև կողմից ուսուցողի մտաւոր կենտրոններում—Մոսկվայում և Պետերբուրգում—գրում էին Պլեշչեևն ու Նադսոնը, մի այնպիսի ժամանակ երբ մեր նոր պոյէտը տակաւին գեոահաս էր, իր ուղին ու գրօշակը ճշ որոշ չափով զծած ու պարզած, զբա վրայ աւելացնէր և այն, որ նա իր ճաշակը զարգացնում էր Բայրընի, Հէյնէի, Լերմոնտովի և այլ կլասիկ բա-

նաստեղծների գրուածքների վրայ, պարզ կը լինի այն հանգամանքը, որ բնականօրէն նա պէտք է ազդուէր նրանից, թէ մէկից և թէ միւսից. և այդ ազդեցութիւնը, թէև փոքր չափով, մենք տեսնում ենք նրա վրայ, մասնաւանդ Ս. Շահազիզի ազդեցութիւնը, թէ գրչով և թէ տոնով (որպիսի տոնը և գրիչը, փակագծի մէջ ասենք, խիստ տարբերում է Գամառ-Քաթիպայից), որ նրա պատանեկական տարիների ուսուցիչն է եղել. այդ ազդեցութիւնը, կրկնում ենք, գեոահաս պոետի սկզբնական տարիներն էին. մենք մեր այդ առածը, նմանողութիւնը, պարզ կերպով տեսնում ենք հետևեալ ոտանաւորներից.—

Ս. Շահազիզն երգում է.

«Գիշեր է գալիս մահիծս եմ մտնում,

«Տրտում է հոգիս, քունս չէ տանում.

«Ո՛հ, սիրտս այրուած ողջ քեզ է կանչում,

«Ողջ քո անմոռաց անունդ է յիշում.

«Մագեր թուխ երկայն, աչեր գրաւիչ.

Յ. Յովհաննիսեանն երգում է.

«Ահա հասնում է և խորին գիշեր.

«Իոև ճաշակում ես հանգիստ անխուփ.

«Իսկ ես քունս չունիմ, և երկար ժամեր

«Անցնում եմ խաղաղ, բայց անուշ ցնորքով:

«Պատկերդ առաջիցս էլ չէ հեռանում,

«Որին գիշերով աղօթքի համար

«Քունս մոռացած ես վեր եմ կենում,

«Օրհնում եմ, հոգեակ, օրերդ պայծառ:

Այս սողերում, ճիշտ է, աշակերտը մտքի արտայայտութեան և գեղարուեստական տեսակէտից թէև շատ առաջ է գնացել իր ուսուցչից, սակայն էականը նոյնն է, եթէ Ս. Շահազիզը նկարագրում է շատ պարզ և անպաճոյճ կերպով իր ըմբռնած իրը՝ եր-

կայն մազերը, գրաւիչ աչքերը, իսկ Յ. Յովհաննիսեանը անոյշ վրձինով նկարագրում է այն պատկերը, որ չէ հեռանում նրա աչքի առաջից, որի համար նա գիշերը վեր է կենում աղօթք անելու:—

Մի այլ օրինակ.—Աշտարակի նկարագիրը.

Ս. Շահազիզը երգում է.

«Ի՞նչ ակնահաճոյ տեսարաններով

«Առատաբաշխած են դաշտավայրեր.

«Ի՞նչ ոսկենկար բուսականներով

«Խնկահոտում են այտեղ հովիտներ.

«Կախուած է գոհարն-ողկոյզ խաղողի...

Յ. Յովհաննիսեանն երգում է.

«Տեսել էք արդեօք այն բլուրները,

«Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն.

«Կանաչում թաղուած այն այգիները,

«Ուր իբրև գոհար խաղողն է հասնում:

Մի երրորդ օրինակ.—

Ս. Շահազիզը երգում է.

«Ինձ մի սիրիբ, ինձ մի սիրիբ,

«Ես շատ և շատ փոխուել եմ.

«Առ թաշկինակդ, աչերդ սրբիբ,

«Ես քեզ սիրել կարող չեմ:

«Գնացին, դարձան անհող օրեր,

«Գնաց և վառ մանկութիւն.

«Կարծես ճնշուեց և մեռաւ սէր,

«Եւ նա չունի այլ գարուն:

Յ. Յովհաննիսեան երգում է.

«Ինձ մի սիրիբ, անբաղդ օրիս,

«Այդ սէրը չէ ինձ խնդութիւն.

«Դաժան վշտից խեղձուած հոգիս

«Էլ չի առնի յարութիւն:

Բերենք մի չորրորդ օրինակ ևս. Ս. Շահազիզի «Հանգիստ իմը».

«Դու իմ հանգիստ հաւատ և յոյս,

«Ծով անսահման բարութեան.

«Դու, դո՛ւ դարձեալ սառը հոգուս

«Կեանք ես ցօղում յարութեան:

«Յօդն, աղբիւր կենդանութեան,

«Յօդա ազատ հոսանքով.

«Եւ իմ ժամերը դառնութեան

«Թող խորտակուեն քո շնորքով.

Յ. Յովհաննիսեանի «Անապատի երգը».

«Անապատումը երերուն կեանքի,

«Անմիտ ցնորքով մաշուած սրտերին,

«Խաւարի մէջը եռուն կրքերի՝

«Միակ սփոփանք ես դու կայծ երկնային.

«Դու անգին գոհար, սէր, դանձ մարդկութեան,

«Դու ես, որ միայն չարատանջ հոգուն

«Բերում ես քաղցր յոյս երջանկութեան,

«Եւ կեանքը սիրել տալիս ես մարդուն:

Ինչպէս առաջին համեմատական ոտանաւորներէս <sup>1/2</sup>

նոյնպէս և այտեղ էականը նոյնն է, միայն, դար-

ձեալ, աշակերտի ոճը և մտքի արտայայտութեան խո-

րութիւնը շատ գերազանցել են ուսուցչին. այդ նմա-

նութիւնները ինքը խոստովանում է բանաստեղծը իր

լեզուով-երգով, ձօնած Ս. Շահազիզին.—

«Լսեցի անուշ, մայրենի բարբառ,

«Տեսայ վառ գեղմունք, ոգևորութիւն:

«Եւ նորից հոգումս յարութիւն առաւ

«Նոր, կրկին գեղով երգը պոյետի,

«Եւ շարժուն սրտիս լարերին հասաւ

«Թաթախուն նուագն անոյշ քնարի:

«Եւ ես մկրտուած նոր մարդ, նոր հոգով

«Մանուկ, հրճուանքով գոչեցի ազատ.

— «Կեցցես, ո՞վ քերթող, քո թովիչ երգով,

— «Կեցցես յաւիտեան, լեզու հարազատ: \*)

Բայց միայն Ս. Շահազիզի ժամանակաւոր ազգեցութիւնը չէ, որ մենք տեսնում ենք Յ. Յովհաննիսեանի վրայ, այլ և Լերմոնտովի, Հէյնէյի որպէս և նկատում է Լ. Մանուէլեանը, նոյնպէս և Նազսոնի ու Պլեշչեևի, ինչպէս նկատում է Մ. Բերբերեանը: Այս նմանութիւնների վրայ երկար կանգ չենք առնի, բաւական է յիշել Նազսոնի «Յուգան», Յ. Յովհաննիսեանի «Սիւնեաց իշխանը», որտեղ միատեսակ նկարագրուած են դաւաճանների հոգեկան դառն տազնապններն ու սորջանքը. Պլեշչեևի խաղաղասիրական «բոլոր մարդիկ եղբայրներ են» և Յ. Յովհաննիսեանի «Զատիկը», Լերմոնտովի երգերի թախծալի տոնն ու Յ. Յ-ի այդ կարմիր գծով բոլոր երգերով անցած սգաւոր տոնը և այլն:

Սակայն այդ նմանութիւններն ու մասամբ հետևողութիւնները եղել են շատ կարճ, պոյետի ապագայում գրած ոտանաւորներում մենք այդ չենք հան-

\*) Սակայն մի բան, որ սկզբից Յ. Յովհաննիսեանը խիստ տարբերուել է իր ուսուցչից՝ դա նրա ժողովրդական մտտիւով երգելն է, ժողովրդական մտտիւով, որ առաջին երգիչն եղաւ հայ քնարերգութեան մէջ, և առաջին ուսուցիչը, որի ոգին չէր ըմբռնում Ս. Շահազիզը: Պատմում են հետեւալ ստոյգ դէպքը. — Մոսկվայում Յ. Յովհաննիսեանը, ուսանող ժամանակը, գրում է «Աշուղ» ոտանաւորը երկու կտոր այցետոմսի վրայ. ըստ իր սովորութեան Յակոբ ք. Սուրէնեանի դուստրը այդ երգը արտագրում է իր պահած տետրում, ուր հաւաքելիս է եղել պոյետի սկզբնական երգերը. օրիորդը այդ երգը՝ մի օր ցոյց է տալիս Ս. Շահազիզին. Ս. Շահազիզը կարդում է և հետեւալ խօսքերը աւսում. «Ի՛նչ գեհեհի բան է»:

գիպում ո՞չ մի տեղ. այստեղ արդէն, երբ բանաստեղծը թողնում է ուսանողական, թութուռն հոգու յատուկ շրջանը և մտնում է կեանք, ինչպէս ինքն է ասում իր Գամառ—Քաթիպային նուիրած ոտանաւորի մէջ.—

« . . . . տեսաւ, որ կեանքն էլ այն չէր,  
«Ի՛նչ կարծել էր երազկոտ, անփոյթ, անհոգ օրերին.

«Եւ վշտարեկ նա հոգով նոր շունչ տուաւ լարերին:

«Մնաք բարով, անուրջներ, կոյս աչագեղ ու գարուն,

«Էլ հնչելու չէ տաւիղ՝ զմայլուած անուշ ձեր սիրուն:

Տեսնելով իսկական կեանքը համեմատ իր ըմբռնածի՝ պոյետը գոռաց.—

«Կամ բնց մեզ մարտի ազատ ասպարէզ,

«Անշղթայ ձեռքով չարի հետ կռուենք.

«Կամ անմահութեան փառք պսակէ մեզ,

«Կամ ինչպէս ձձի ոտի տակ կորչենք:

Հայ նորագոյն բանաստեղծութեան վետերան երբ լոյս ընծայեց իր առաջին գրքոյկը՝ բաղկացած 65 ոտանաւորից՝ նա սկսեց մի այսպիսի երգով.

«Նայում եմ առաջ—երկու ճանապարհ

«Բաց է իմ դիմաց. մէկը տանում է

«Շքեղ, բաղաւոր, նուիրական աշխարհ

«Քնքոյշ զգացմունքի, ուր միշտ ծաղկում է

«Գարունը սիրոյ երկնքից օրհնած:

«Միւսն անապատ ինձ դուրս է հանում,

«Որ կարօտում է մշակող բազկի:

«Բայց այնտեղ կեանքը չունի նպատակ,

«Բացի անձնական բարօրութիւնից.

«Իսկ այստեղ գործի ասպարեզ արձակ,  
«Ազնիւ և վսեմ, թէև փշալից»

Ու՛ դեռահաս բանաստեղծը կանգնած այդ երկու ճանապարհի առաջ մտածում է, թէ նրան կեանքը դրանցից ո՞րն է պատրաստում, (բայց ոչ թէ որն է ինքը ընտրելու, ինչպէս գրում է մեր գրախօսանքից մէկը):

Բացի «Երկու ճանապարհից» մենք Յ. Յ-ի նախկին բանաստեղծութիւնների մէջ կը տեսնենք մի շարք համամարդկային թախիժ, որ յատուկ է իւրաքանչիւր անհատի հոգուն. օրինակ՝ «Գեղեցիկ օրերը», ուր հիացմունքով երգելով իր «ծաղկավառ օրերը», մտածում է.---

«Եւ այն բոլորը, ինչ ինքնահաւան  
«Ստեղծում է միտքս վառուած, բորբոքուած,  
«Ջրանալու է շուտ ծխի նման:

Նոյնպէս և «Աւերակի» մէջ. խօսելով հայրենի՝ անցեալ մեծութեան փառքի մասին, ուր ամեն ինչ չքացել է՝ հետեցնում է.

«Ո՛հ, այսպէս ողջ մեր կեանքն է վաղանցիկ,  
«Ողջը լոկ ծաղր է անսիրտ բնութեան.  
«Եւ սէր, և հրճուանք, համայն գեղեցիկ  
«Ձոհ է աւերի և մոռացութեան:

«Ինչպէս պատրանքը հեշտասիրութեան,  
«Ինչպէս գրգիռը պատանու արեան,  
«Խարուսիկ ժպիտն աշնան արևու,—  
«Բոլորը վաղն է անհետանալու:

Այսպէս և «Երկու համբոյր» երգի մէջ. խօսելով երիտասարդական չքնաղ սիրոյ ու երակների մէջ ուժգին դարնող արեան մասին՝ թախծում է.—

«Բայց կըգայ ժամը, երբ հրաժարական  
«Պիտի տանք ողջոյն բոլոր պատրանաց,

«Եւ անուշարոյր կեանքի քաղցրութեան,  
«Եւ անագորոյն դառն հառաչանաց,—  
«Եւ անհ գունատ մահը կը դրոշմէ  
«Իւր սառն համբոյրը մեր սառ շրթունքին,  
«Եւ գիտեմ, որ նա պիտի չխաբէ  
«Մեզ փաղաքշելով իւր անկեանք կուրծքին:

Նոյնն է և «Երբ ես տեսնում եմ ունայնասէր» երգի մէջ, որտեղ պարզ ասում է, «ունայնութիւն ունայնութեան, ամենայն ինչ ընդունայն», հին պեսի-միստիքական դարձուածքի իմաստը հետևեալ խօսքերով.—

«Ես կամենում եմ այն կեղծ երեսին  
«Տալ ճշմարտութեան սուրբ խօսքն անկաշառ.  
«Իբր անեղ փողի որոտ՝ ականջին  
«Հասցնել մի մեծ, սոսկալի բարբառ,—  
«Հող էիր, ո՞վ մարդ, հող դառնաս դարձեալ:  
Այնպէս՝ ինչպէս երգել են շատերը, ինչպէս և շատերից մէկը՝ Ֆրգուսին իր երգերում,—  
«Հողիցն ենք մենք. հողն ենք վերագառնում.  
«Հողագնդի երեսին լի ենք վշտով—թախիժով.  
«Մենք հեռանում ենք, երկիրն է մնում՝  
«Ոչ ոք դեռ չէ գտել նրա գաղտնիքը:

Բայց այդ, մինչև այժմ բերած օրինակները, դեռ միայն համամարդկային թախիժն է, կամ մահուան խորը գիտակցութիւնը, որ իբրև ուրուական գալիս կանգնում է պոյետի հանգէպ և մտածել տալիս. կայ նրա երգերում և տիրութիւն, ողբ, որ տիրապետել են երգչին շատ վաղ.—

«Ձգում եմ արդէն, հանգչում է հոգիս,  
«Էլ չկայ բոցը ոգևորութեան.  
«Ձուր է քո խրախոյս, զուր է սիրելիս,  
«Էլ ինձ չի ծագի արևը դարնան.

Handwritten notes: 226 2019, 1968, 7991, 2001



«Էլ աղմկալից կեանքը աշխարհի  
«Եւ ոչ սէրն անուշ իւր երազներով  
«Այն հրապոյրը չունին վաղեմի,  
«Այն քաղցրութիւնը և այն մեղմ գորով...

«Վառվառն կեանքից ես դեռ չքաղած  
«Եւ ոչ մի ծաղիկ, արդէն ուժասպառ  
«Ընկած եմ որպէս մի ծերուկ մաշուած,  
«Եւ վայելչութիւնն արդէն ինձ օտար...

Եւ այս տողերը գրում է բանաստեղծը 1886 թուին, երբ նա դեռ 22 տարեկան երիտասարդ է, երբ կեանքը լի պէտք է լինէր նրա համար հրապուրանքով ու ոգևորող ձգտումներով, ու այդ նոյն 1886 թուին է, որ նա գրում է իր կեանքի 22 դարունը, որտեղ նոյնպէս շեշտում է (խիստ նման Միք. Նալբանդեանին\*)։—

«Եւ իմ մանկական սէրը ցնորամիտ,  
«Եւ անկեղծ սրտի ոգևորութիւն,  
«Եւ քաղցր արտասուք, և ոսկէ ժպիտ,—  
«Ա՛խ, ո՛ւր էք, ո՛ւր է ձեր անուշութիւն.

«Գիտութիւն ինչպէս մի թոյն դանդաղիտ  
«Աննկատելի վարակեց հոգիս,  
«Ինչպէս ցուրտ ձմեռ միտքս կասկածոտ  
«Բաղեց, խորտակեց ծաղիկը կեանքիս...

\*) Իսկ Մ. Նալբանդեանն այսպէս է երգել այդ դառն հիասթափութիւնը իր ժամանակին.

«Մանկութեան օրեր, երազի նման,  
«Անցաք գնացիք, այլ չէք դառնալու.  
«Ո՛հ, դուք երջանիկ, ո՞ն անհոգ օրեր,  
«Ընդունակ միայն ուրախացնելու:

«Զեզանից յետոյ եկաւ գիտութիւն  
«Իր դառն հայեացքով աշխարհիս վերայ.  
«Ամեն բան ընկաւ մտածութեան տակ,  
«Բոպէ չմնաց ազատ կամ ունայն:

«Իբրև երերուն եղէգն առուակում,  
«Տեսնում եմ պատկերս և սարսափում եմ.  
«Հսում եմ մարդկան երգերը տրտում,  
«Անմիտ և դատարկ, և տաղտկանում եմ...  
«Եւ երջանկութիւնս թէ անդարձ կորաւ,  
«Փշրուած ինչպէս տխուր փլատակ.  
«Թէ անհոգ տաւղի ձայնը մօտեցաւ  
«Եւ մնաց ինձ լուկ նրա յիշատակ:

Սակայն բանաստեղծի այդ թախծալի շրջանը, մասամբ, և իր դեռ չհարթած ուղին՝ երկար չէ քաշում. ինչպէս մենք ասացինք, երբ նա կեանք է ոտք դնում, երես երեսի գալիս կեանքի հետ, այդ ժամանակ նա արդէն զինուած է հզոր հոգով, և դէն է մըղում թախիծը, տեսնելով, որ լուկ համամարդկային թախիծով ու երերումներով կեանքի մէջ ոչ միայն ապրել, այլ և գոյութիւն անդամ պահպանել անհնարին է. այնուհետև նա սկսում է այլ շեշտով երգել.— բողոքել, կռուել, մարդահարաւէր կարգաւ. թէև այդ ամենի մէջ էլ դարձեալ մնում է թախիծը փոքր չափով, որ նրա երգերի էական և անուշ յատկանիշն է կադմում. բայց տակաւին իսկական բողոքող—շանթող շրջանին չհասած՝ նա իր միքանի բանաստեղծութիւններին մէջ բռնում է անցողական շրջանը, որ թէև սկզբից նիւթը գրում է լքեալ, թախիծով, սակայն վերջացնում է յուսատու տոնով.—

«Լինում է բոպէ, ես անիծում եմ  
«Եւ իմ վիճակը և ամբողջ աշխարհ,  
«Երջանիկ մի օր, ես մտածում եմ,  
«Բաղդը չի բանայ երբէք ինձ համար:  
Ապա դառնում է զօրեղանում և դիմադրում իր սև մտքին այսպէս.—

«Բայց ոչ, չկամիմ զլուխ խոնարհել  
 «Արիւնով կանգնած մեծափայլ կուռքին...  
 «Իմ հոգու ձայնին ես հաւատում եմ—  
 «Էլ այսուհետև հաւատս պայծառ:

Մի այլ ոտանաւորում.—

«Դու արտասուում ես և չես ամաչում  
 «Այդ անկեղծ սրտի արտասուքներինց.  
 «Եւ գիտես, որ զուր հանգիստ ես խնդրում  
 «Յուսահատութեան տառապանքներինց:

Իսկ վերջը յոյս է տալիս.

«Յուսան դու խղճուկ, յուսան. թող լինի  
 «Վշտի հրեշտակը քեզ հովանաւոր.  
 «Ո՞վ գիտէ, գուցէ պայծառ վիճակի  
 «Օրը դեռ ծագի և քեզ փառաւոր...  
 Եւ արդարև, այդ սև ամպը երկար չի պատում

երգչի սրտին. նա իր «անցիր սև ամպ» երգում ա-  
 սում է.—

«Անցիր, սև ամպ, դու իմ սրտինց.  
 «Բացուիր, երկինք կաշուտակ.  
 «Տխուր, խաւար թուխալի միջինց  
 «Յուր, գարնան արեղակ:

«Թէ մայր երկիրն ազատուեցաւ  
 «Իւր կուռ, ճնշող կապանքինց.  
 «Նոր ցնծութեան երգ լսուեցաւ  
 «Չէք արտուրի բերանինց...  
 Եւ իրան, հէք արտոջր՝ Յովհ. Յովհաննիսեանի

բերանինց լսում է ցնծութեան երգ, որ հետզհետէ ա-  
 ճելով դառնում է մարդահրաւէր:

Այժմ տեսնենք, թէ ինչպէս է զարգանում, առաջ  
 գալիս այդ պոյետի սրտում:

«Երգչին» նուիրած իր բանաստեղծութեան մէջ  
 նա այսպէս է երգում.—

«Մի վհատիր, եթէ աւեր  
 «Եւ սուգն ընկաւ քեզ բաժին.  
 «Թող ստրկութեան մռայլ գիշեր  
 «Ահ չբերէ քո սրտին:

«Մի վհատիր, ել ասպարէզ,

«Առ եօթնադի քո քնար  
 «Եւ տանջանքի օրհներգ տուր մեզ,  
 «Ողբի աղբիւր մեզ համար:

«Եւ քո ձայնը թող որոտայ,  
 «Ինչպէս ամպըսպ խաւարում,  
 «Թուխպը՝ ցրուի, փայլակ ցոլայ  
 «Արեամբ փրկուած աշխարհում:

Իր «Մատաղ մուսա» երգում Յ. Յովհաննիսեանն  
 այդ միտքն աւելի շեշտաւոր է ասում, որը նրան պա-  
 սուէր է տուել ինքը մուսան. ահա այդ պատուէրը.—

«Սիրոյ զուարճութեան մեղեդիներին  
 «Ժամանակը չէ, ո՞վ անհոգ երգիչ.  
 «Դուրս եկ ասպարէզ մահառիթ կուռի,  
 «Թունով թաթախուած սու կարող գրիչ:  
 Եւ այդ մուսան հրամայում է, որ թոյնով թա-  
 թախուած գրչով՝

«Անխնայ դատէ հղենագործին,  
 «Մեծատան երեսն այրիր ամօթով.  
 «Մեր բոլոր ախտեր ցոյց տուր աշխարհին  
 «Խայտառակութեան անարգ պսակով:

«Թող որ չարութիւն սարսափի տեսած  
 «Արժանի պտուղն ըստոր գործերի,  
 «Եւ կեղծաւորը ուշաթափ եղած  
 «Թող իւր ոսկեղօծ դիմակը հանի...  
 Եւ բաւական չէ, որ այդ կոչը անում է բանաս-

տեղծը, այլ և ունի նրա դրօշակակիր զինուորը, որ  
 «Աներկբայ մտքով, հաւատով հոգով

«Քարոզում էր իւր խաչի քաղցրութիւն,  
«Ինչպէս խարազան երկաթի՝ խօսքով  
«Նա հալածում էր շահ ու բոնութիւն:  
Բայց այդ զինուորը, յաղթուելով քուրմերից՝

«Եւ հաւատարիմ իւր կոչման մեռաւ՝  
«Սուրբ ճշմարտութեան ամբիժ նահատակ,  
«Իսկ սիրոյ նշանն անմահ դրոշմուեցաւ  
«Շատերի սրտում մէկի փոխանակ:

Այսպիսով, թէև այդ զինուորը ընկնում է, մեռնում, բայց տարած է լինում յաղթանակը:

Ու այդ կերպ պոյետն արդէն զօրեղ կերպով հաւատում է իր պարզած դրօշակին ու յաղթանակին, որովհետև նա համոզուած է, որ

«Ինչպէս չի կարող ձմեռն արգելել  
«Գալուստը շքեղ, ծաղկաբոյր գարնան.  
«Նոյնպէս ճշմարիտ խօսքը խափանել  
«Չի կարող ձայնը անմիտ չարութեան:

Այն բողոքող և կռուի հրաւիրող հոգին մենք աւելի վառ գոյներով տեսնում ենք նրա հայրենիքին նուիրած երգերում: Ինչպէս միւս ոտանաւորներում, այսպէս էլ այստեղ չէ կեղծել Յ. Յովհաննիսեանը, չէ գըրել այն, ինչ որ հրապարակին ժամանակաւոր տիրող է հանդիսացել և իրեն երիտասարդ սերնդից, կամ լաւ է ասել, պատանիներից ծափեր վաստակելու առիթ տուել. ոչ, նա այդ չէ արել, նա գրել է իր սրտի թելադրածը, իր զգացածը, իր յոյզերն այնպէս, ինչպէս Գէօթէն է ասում—«Թռչունը նստած ծառի սաղարթում», ամենևին ուշ չածելով, թէ իր երգը որքան ժամանակակից է... Իե՞տ աւելին կասենք, Յ. Յովհաննիսեանը իր քնարը զոհ չէ բերել ինքնահաւանութեան, հոսանքին զիւր գալու: Իրա հետ մի նշանաւոր կէտ ևս, որ Յ. Յովհաննիսեանի յատկանիշն է կազ-

մում, այդ այն է, որ նա միշտ նիւթին վերաբերուել է երկիւղածութեամբ, իր զգացածը նախապէս մտածել, կշռել, ապա կաղապար ածել՝ ձուլել. ահա այդ երևոյթին են պարտական նրա երգերը, որ այնքան իմաստալից են, այնքան ներշնչող. նրա երգերի մէջ մենք չենք գտնում աճապարանք, ոչ էլ երեսանց գըրած, դէն շարտած բաներ, ինչպէս ուսուերէն ասում են „СКОМРАТЬ“, այլ խնամքով հիւսած:

Ահա թէ ինչպէս է նա պատկերաւուն է երգում իր հայրենիքի դրութիւնը.—«Գիշերուայ երգում» պոյետը տխուր նստած է սենեակում հազար ու մի ցաւերով լի. այդ ժամանակ քամին է բաղխում նրա դուռը, ու նրա հարցին, թէ՛

«Չարատանջ պանդուխտ, քամի դու ձմրան,  
«Արդեօք եկած ես դուայն աշխարհից,  
«Ուր փարթամ ծաղկած մշտական գարուն...»

Քամին պատասխանում է.—

«Հայրենի երկրից, ես իբրև գուժկան  
«Թռչում եմ սփռել հայրենի ցաւեր...  
«Եւ արիւնաներկ լայն հովիտներից  
«Նուէր եմ բերում ոչ փնջի վարդեր,  
«Այլ անեղ պսակ, պսակ փշալից,  
«Որ զարգարում է ճակատը հայի.  
«Ուր չկայ անգուսպ կրքերի սահման,  
«Ուր օր ու գիշեր խիստ դատավճռին  
«Սպասում են անթիւ դոհեր բռնութեան,  
«Ուր չկայ ժպիտ մէկի երեսին:  
«Այնտեղ թօշնում է վարդը կոկորնում...»

Առ այդ երգիչը զայրացած դառնում է.—

«Այնտեղ, ուր արցունք, շլթայ և աւեր,  
«Ուր լսում է լոկ հառաչք լալագին,

«Քո քընարիցը թող ուրախ ձայներ,

«Ո՛վ թշուառ երգիչ, բընաւ չըլտուեն...»

«Տղմուտ» ոտանաւորը, որ իր շէնքով յիշեցնում է «Մայր Արաքսին» և ոչ պակաս գեղարուեստօրէն արտայայտած՝ ամբողջապէս տողորուած է հայրենասիրական անկեղծ ոգով. այդ ոտանաւորը ընթերցողին տանում է Աւարայրի դաշտը, շրջել է տալիս այնտեղ մուտք գիշերով, ցոյց է տալիս հովուի լուող սրինգը, թռչունի մարած երգը, նիրհած ծաղիկների օրօրն ու երբեմնակի համբուրուելը հովի հետ. ապա ազատութեան ոգով տողորուած Վարդանին, որ թունալից երկաթէ խարազանը դէմ է բերում բռնութեան: Սակայն ափսոս, որ այս պատկերաւուն բանաստեղծութեան մէջ Յ. Յովհաննիսեանը ընկնում է իր խորհրդածութիւնների ետեից և պատկերը թուլացնում է. մի բան, որ ընդհանրապէս յատակ է Յ. Յովհաննիսեանին և որոշ չափով սառեցնում է նրա գեղուն պոյէզիան:

«Միւսեաց իշխանը». սա մի էտիւդ է, մի հոգեբանական պատկեր, որ լուսաբանում է մեզ պոյետը մօտ 15 դար առաջ սքողուած մթութեան մէջ և դատապարտուած իշխանին, ցուցադրում է նրան իր հայրենասիրական և քաղաքագիտական խոհերով.

«Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, միթէ՞ այլոց պէս

«Բեզ, իմ հայրենիք, չսիրեց Վասակ,

«Միթէ՞ քեզ համար սիրտս աղեկէզ

«Պիտի գոհուելու չլինէր ընդունակ...»

Բայց՝ «Ո՛չ, ոչ. ես մի խեղճ, աննշան ճճի,

«Արժանի էլ չեմ լինել քո ոտքի

«Կոխելու հողը...»

« . . . և դու մոռացար,

«Իմ խեղճ հայրենիք, արեան պալատներ,

«Անառակութեան խայտառակ տաճար,

«Եւ արիւնապղիճ շամբշոտ գիշերներ...»

«Այդ քո թագազարդ պետերը չէ՛ին:

«Եւ դո՞ւ, ուժասպառ, վիրաւոր եղնիկ,

«Խոնչպէս կամեցար պարսիկ առիւծին

«Կուր ելանել... Անբաղդ հայրենիք,

«Արիւնդ հոսում էր հեղեղի նման...»

« . . . Երեսիդ վրան

«Դեռ չէր ցամաքել արտասուաց առուն—

«Մի ժբալի՜ր՝ ճակատ դու գոռ վտանգին

«Յոյց տուիր անաս: Եւ ի՛նչ՞ փոխանակ

«Օրօր ասելու նիրհող գազանին,

«Սոսկալի մարտի դարկեցիր կոչնակ...»

Բացի այդ Վասակին ներկայացնում է իբրև մարդ անհատ իր ընտանեկան-ծնողական զգացմունքներով:

«Ա՛խ, անցեալ օրերն անմեղ շրջանում...»

«Այն ի՛նչ երջանիկ, քաղցր օրեր էին.

«Մի հանդարտ լուսով ճրագն էր վառում,

«Շուրջս սիրական որդիք ամուսին...»

«Բայց ի՛նչ եմ տեսնում, այդ միթէ՞ դուք էք,

«Անգին զաւակներ... Ա՛խ ծածկէք շուտով

«Այդ կուրծքը պատում. մի՛ մերկացնէք

«Մատաղ գլուխներդ ներկուած արիւնով...»

«Կուրացէ՛ք, աչեր. յանդիմանութեան

«Այն հուրը չտեսնեմ նոցա աչքերում.

«Այն էր, որ վառեց կայծակի նման

«Չարատանջ հոգիս գոռ մարտի դաշտում...»

Բայց միայն հայրենասիրի լոկ երգը չէ, որ ունի պոյէտը. ահա և նրա գինուորը, որ մեռնում է հայրենիքի համար, կտակելով, որ իր մահը չ'ողբան, որովհետև նրա թափած արիւնից ոչ թէ՛ փուշ ու տատասկ են բսնելու, այլ՝ կարմիր վարդեր, որոնք պսակ են

հիւսելու ազնիւ զոհի ճակատը զարդարելու համար: Այդ զինուորը հանգիստ սրտով մեռնելով երգում է.—

«Եւ թող քո գրկած կուրծքը մայրենի  
«Քո ազատ կուրծքը, սիրուն հայրենիք,  
«Քնանամ մինչև ականջիս հասնի  
«Քո ազատութեան անուշ աւետիք.  
«Ես այն ժամանակ կ'եղնեմ և պայծառ  
«Արևըդ տեսած՝ իմ բաղբը կօրհնեմ,  
«Որ իմ հայրենիք, միայն քեզ համար,  
«Քեզ համար միայն կեանքս զոհել եմ...»

Սակայն Յ. Յովհաննիսեանը բաւական չէ համարում զինուորի մահը, այլ և հաւատում է հայրենիքի փրկութեան. նա իր «Տեսնում եմ ահա» գեղեցկակերտ երգի մէջ խրախոյս է անում, կոչ է կարգում մարտի.—

«Բայց իմ հայրենիք, դու պիտի չմեռնիս.  
«Ես հաւատում եմ յարութեան օրիդ.  
«Մօտ է ժամանակ, զարթիր, սիրելիս,  
«Փրկութեան աստղը վառում է ճակտիդ:  
«Ոտքի ել, հողիս, շղթագ թօթափիր...»

Հայրենիքի սէրը, վիշտն ու անցեալ աւանդութիւններն աւելի ճոխ երգուած են նրա ժողովրդական երգերում, որ յետոյ կը տեսնենք իրենց տեղում. բայց նախ քան այդ այժմ նայենք, թէ ի՞նչ է իսկապէս Յ. Յովհաննիսեանի երգերի էական, տիրապետող մասը:

## II

Մինչև այժմ շատերի համար հայ գրականութեան մէջ հարցական է դառել այն միտքը, թէ ի՞նչ է Յ. Յովհաննիսեանի դաւանանքը, իրենց լեզուով ասած կրեղօն:

Որոնել լիբիկ պոյէտի մէջ դաւանանք՝ դա մի-

անգամայն սխալ է. քնարերգու բանաստեղծը դաւանանք չունի. նրա դաւանանքը, նրա կրեղօն իր սրտի զեղմունքն է, հոգու յուզումները, ապրումները, որ վերարտադրում է քնարերգական ձևով. ուրիշ խօսքով ասած՝ նա իր զգացածի, ըմբռնածի հարազատ արտայայտիչն է, ինչպէս մի թուչուն, որ երգում է ազատ, առանց պատուէրի: Այլ բան է, եթէ Յ. Յովհաննիսեանի մէջ դաւանանք փնտոտղները վերածէին նրա երգերը տեսակների և տեսնէին, թէ ի՞նչ է այն զօրեղ կողմը, որ կարմիր թելի պէս անցնում է նրա բանաստեղծութիւնների միջով, որպիսին իմ կարծիքով սէրն է, մարդկային—եղբայրական սէրը, որ շաղկապուած յուսոյ հետ՝ բարիքն է մարդկութեան, զբանց հետ միացնում է բանաստեղծը լուսոյ և կրթութեան քարոզը:

Յ. Յովհաննիսեանը, նման Պէշիկթաշլեանի, այս երգերում մեղմ է, խաղաղ. նա այս մասում կասես մրմնջում է, աղօթք է ասում և ընթերցողին զէպի վեր տանում. վերցնենք նրա (առաջին գրքոյկում լոյս տեսած) ոտանաւորներից «Աւետարանը», ուր նա ասում է.

«Ամեն անգամ երբ թերթում եմ  
«Ես էջերը սուրբ գրքի՝  
«Միշտ վշտացած մտածում եմ,  
«Ո՞ւր է սէրը մարդերի:  
«Ամենայն գիրք միշտ կարգում են,  
«Սիրոյ գիրքը չկամին.  
«Ո՞ւր չգիտեմ որոնում են  
«Բախտը իրենց խեղճ կեանքին:

Ուրեմն՝ մարդկային երջանիկ կեանքը, բաղբը Յ. Յովհաննիսեանը գտնում է խաղաղ սիրոյ և հաշտութեան մէջ: Այդ միտքը աւելի շեշտաւոր նա ասում է «Անլոյս խաւարի» մէջ, ուր

« . . . վաղուց մարդիկ  
 «Ապառաժ սրտով կործանել էին  
 «Սանդավառ զգացման պատկեր գեղեցիկ.  
 ուր՝ «Էլ չէր կարմրում նենգամտութիւն,  
 «Առաքինութեան փառքն էր շիջած:  
 բայց՝ «Բայց հասաւ օրը մի նորոգ կեանքի...  
 որ՝ «Սոսկայոյզ միտքը մարդկան  
 «Ըսպասում է այն օրին,  
 «Երբ սէրը մեծ ու անվախճան  
 «Պիտի յառնէ վերստին:  
 Իր՝ Ս. Շահազիզին նուիրած երկրորդ ոտանաւորում բանաստեղծը պարզ կերպով ասում է, թէ ինչ է մեզ պէտք.—  
 «Սէր, եղբայրութիւն, գիտութիւն և լոյս:  
 Իսկ «Տիրամօր» պատկերի առաջ, երբ նա կանգնած՝ աշխարհի ունայն հոգսերով շրջապատուած, մտածում է աշխարհի սին փառքի, մէկի յաղթանակի ու միւսի անկման մասին՝ դիմում է Տիրամօրը հետեւալ տողերով.—  
 «Գիտեմ, ողբում է այդ սիրող հոգիդ  
 «Արեան մէջ խեղդուող մարդկութիւնն անկեալ:  
 «Դու կարեկցութեամբ երկրիս հովանի:  
 «Մաքուր բնրկրութեամբ լի է իմ հոգին.  
 «Ծունկ եմ խոնարհում ահա քո առաջ,  
 «Սուրբ գեղեցկութեան տիպար երկնային,  
 «Կենդանի սիրոյ մայր լալահառաչ...  
 Թէ՛ որ աստիճանի սէրն է ընդունում պոյէտը մեր կեանքի լաւագոյն իղձն ու կատարելութիւնը՝ այդ երևում է նրա «Զատիկ» ոտանաւորից, ուր ասում է.—  
 «Կուզէի տեսնել եղբայրն եղբօր հետ  
 «Գեղեցիկ գործում ձեռք-ձեռքի տուած.  
 «Սէր ու հաշտութիւն իրանց կարապետ,

«Եւ սուրբ համբոյրով՝ ի մի շողկապուած...  
 Վերջապէս, որ սէրն ու իղեալն է ընդունում մեր շնորհալի բանաստեղծը միակ նեցուկը մեր կեանքին և յաւիտեանականը, այդ երևում է նրա հետեւեալ երկու ոտանաւորից.—

«Միայն սէրը միշտ կը մնայ  
 «Իմ սրտումը կենդանի.  
 «Ոչինչ սիրող սրտի վրայ  
 «Բռնանալու ոյժ չունի:  
 «Միայն այն կապրի, որ միշտ է անմահ—  
 «Սուրբ գեղեցկութիւն և սուրբ զաղափար.  
 «Վե՛հ միտքը ազատ կենդանի կը մնայ  
 «Ու սէրն անձնագո՛հ խեղճ եղբօր համար...  
 Եւ այսպէս՝ երգելով եղբայրական սէրը՝ նման Պրեշչեկի «Բոլոր մարդիկ եղբայրներ են», այնուհետև անցնում է լոյսի ուղիին, իր «Սարն ի վեր» երգի մէջ, որ մեզ բարձրացնում—ասնում է գէպի լոյսը, կըրթութիւնը, վեր, վեր.—  
 «Դէպի վեր, գէպի վեր... Անվերջ է ուղիս.  
 «Յոգնեցան բազուկներս այս կուռնիս անզօր,  
 «Սպառեցաւ և վերջին ոյժն էլ ծնկներիս—  
 «Դէպի վեր, սարն ի վեր, քաջասիրտ զինուոր:  
 «Աւելի կարծրանան թող այս սև ժայռեր,  
 «Աւելի թող սպառնայ անդունդն անաւոր,  
 «Դեռ շունչ կայ բերանումս, շարժում եմ ձեռքեր—  
 «Դէպի վեր, սարն ի վեր, սով արի զինուոր:  
 «Դեռ հեռու է կատարն անամպ ու յստակ,  
 «Բայց եթէ չը հասնենք այնտեղ մենք այսօր,  
 «Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է յաղթանակ—  
 «Դէպի վեր, սարն ի վեր, անվեհեր զինուոր...  
 Որ պոյէտը այլ ևս տատանուող չէ իր ընտրած ուղիի մէջ՝ զբան պերճախօս ապացոյց է նրա «Հաւա-

տում եմ» երգը, ուր ամեն անկումից յետոյ դարձեալ հաւատում է վերականգնելուն.—

«Հաւատում եմ—մեռնելու չէ սուրբ գազափար:

«Թող աւերի հայրենի տունն հիմնայատակ,

«Բայց քանի հուրն առկայծում է...»

«Իբրև փիւնիկ նա կը յառնէ անշուշտ մի օր...»

Պոյետին ղէպի վեր տանող, ղէպէն բարձունքը սլացնող ամենալաւ երգը «Արտուտի և Արծուի» երգն է, ուր նա նկարագրում է գոռող, բիրտ ոյժի տէր արծուին, որ յոյսը դրած իր թևերի ու մագիլները վրայ՝ գիտէ գոռալ.—

«Ինձանից դատ էլ ո՞վ կարող է սլանալ...»

Բայց՝ «Արտուտը փոքրիկ մինչ երկինք հասած,

«Արևի ոսկի փայլովն ողողուած՝

անուշ ձուռողիւն էր հնչեցնում և կենսաբեր գարնան գովքը գեղեցիկում. արծիւը տեսաւ, որ ոյժը չէ աշխարհին միշտ տէր. այլ՝

«Իէպի վեր, ղէպի լճոյ...»

Ահա թէ ինչն է Յ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւնների էական մասը, որ կարմիր թելի պէս անցնում է նրա բոլոր բանաստեղծութիւնների միջով:

Սակայն, այստեղ մենք մի հարց կը տայինք լիբիկ բանաստեղծի մէջ կրեղօ փնտռողներին.— Ի՞նչ էր Լերմոնտովի կրեղօն. արդեօք նա էլ նոյն բազմակողմանի՝ աղօթող, աղմկող, սիրող, ատող, թախծող, քաջալերող մինչև երկնքի աստղերը բարձրացող, մինչև ովկիանսի յատակը իջնող երգիչը չէ՞ր, որ ուս ժողովրդի Բայրընը հանդիսացաւ. միթէ Լերմոնտովի արժանիքը ուս ժողովուրդը գտաւ նրա դաւանանքի մէջ. ո՞չ. նա գտաւ պոյետի արժանիքը նրա «Молитва»-ի, «Ангель»,-ի, «Вѣтка Палестины»-ի, «Демонъ»-ի և այլ նման գոհարների մէջ:

Լիբիկ բանաստեղծի համար դաւանանք չկայ. նրա դաւանանքը իր զեղուն երգն է:

Մինչև այստեղ մենք ցոյց տուինք մեր շնորհալի բանաստեղծի տաղանդի առաջ գալն ու նրա աստիճանաբար զարգանալը, այժմ տեսնենք, թէ ինչպէս է երգել սէրը, ինչ արժանիք ունեն նրա ժողովրդական լեզուով երգած երգերը, և ինչպիսի բանաստեղծական լեզու ունի նա:

Յ. Յովհաննիսեանն իբրև բազմակողմանի ուղղութեամբ երգող երգիչ՝ երգել է սէրը, իր սրտի աննման հրեշտակի սէրը, հարաւի դատեր սէրը. նա այդ սէրը երգել է արևելցու յատուկ ոգով, այնպէս վառվառն, այնպէս ցայտուն, որ իր տաք շնչով սառած սրտերն անգամ տաքացնում է. այդ սէրից ապա պոյետն անցնում է անաղարտ, մաքուր աղօթող սէրին, որ երկիւղածութեամբ է պատում ունկընդիւրներին, այնպէս քնքուշութիւն է առաջ բերում, որ կարծես խօսում ու մտածում է մի եթերային, թափանցիկ էակի, վարդի թերի, մի հրեշտակի մասին:

«Ա՛խ տուէք ինձ քաղցր մի քնի, մէջ նա ասում է.—

«Եւ աչագեղ կոյսն ականջիս

«Իր մեղեգին մեղմ հնչէ,

«Եւ հերարձակ՝ սիրով վրիս

«Փարէ քնքուշ, փաղաքշէ:

Աւելի վառ գոյնով և հարաւի որդուն յատուկ տեմպով (նման Սայաթ-Նովայի) նա երգում է իր սրբտի բուռն զեղմունքը «Երգ» ոտանաւորի մէջ որտեղ՝

«Վառ աչերդ ինչպէս արև գարնային

«Ա՛խ, սիրական, բորբոքում են իմ հողին:

«Իրաւունք տուր՝ ծծեմ մեղրը շրթունքիդ,

«Քաղեմ կարմիր այդ վարդերը թշերիդ.

«Ով որ առնի հոտը շամամ ծծերիդ,

«Էլ կարող է թէ մի գին տայ իր կեանքին»:

Եւ այնքան տարւում է իր զգացմունքներով, որ համաձայնում է մինչև անգամ իր սրտի թագուհու մօտ գնալու, նրա վզովն ընկնելու, համբուրելու համար՝ նրա ապրշումէ մագերիցը կախ տալ իրեն, որպիսի մահին բնաւ մի կեանք էլ չի հասնի:\*)

Մակայն սրան՝ այդ տարփածու սէրին՝ շուտով հետևում է յստակած, զսպած սէրը, երբ՝ գրում է պոյետը Ա-ին նուիրած երգը.—որտեղ ուզում է վճիտ ակիք լինել՝ ինչպէս առաւօտեան յստակ ցօղ նրա երեսը գոհար շիթերով ոռոգելու. ուզում է սօսի հովասուն լինել, ծաղկոցում բացուած վարդ լինել, արևի շող լինել, այդ ամենը նէրան վայելչութիւն պարզեւու համար, վերջապէս՝

«Եւ կախարդական տաճարում կանգնած

«Կուգէի տեսնել ես քեզ Անահիտ,

«Եւ երկրպագել առաջիդ չոքած՝

«Սուրբ գեղեցկութեան անմահ տիպարիդ:

Ահա թէ ուր է տանում պոյետի քնքուշ, յղկած մաքուր սէրը. սակայն այդ դեռ բաւական չէ՝ նա իր «Ես քեզ սիրում եմ» երգի մէջ այնքան սուրբ զգացմունք է տածում դէպի մաքրութեան տիպար անարատ հրեշտակը, որ չէ թոյլ տալիս անգամ սիրել այդ էակին նէրա վառ աչքերի, վարդ այտերի, նազուք

\*) «Թէ Սասուած ինձի պիտի մահ տայ, թող մօտ գամ: «Վզովդ ընկնեմ, քեզ համբուրեմ մի անգամ. «Թող ապրշում մագերովդ ինձ կախ տամ— «Բընաւ մի կեանք էլ չի հասնի այդ մահին: Իսկ Սահաթ-Նովան 1758 թ. այսպէս է երգել իր սիրոյ խենթութիւնը:

«Սայաթ-Նովէն ասաց. Զալում, ես էն մահին մահ չեմ ասի՝ «Հէնչափ ըլի գուն վրէս լամ մազդ շաղտալով, աչքիլում:

շրթունքի, երկնային ժպիտի համար, որ հրապուրիչ են, այլ նրա՝ համար, որ նէրա ամբիժ հոգին օտար է աշխարհի տգեղ ախտերին, որ հաւատը մանկական խաղաղ է. պոյէտը իր այդ երգը վերջացնում է հետևեալ տողերով.—

«Եւ սեղան կանգնած երկրպագութեան,

«Հալուէ ու զմուռս, կնտրուկ սրբազան

«Քեզ պիտի ձօնեմ, թէ սէրն իմ սրտի

«Քեզ պէս դիցունուն չէ պոհ արժանի:

Այդ սրբազան սէրը իր կատարելութեան հասնում է «Երբ ես նստած եմ» բանաստեղծութեան մէջ, որտեղ պոյէտն արդէն իր բուն ու քնքոյշ և նուիրաբերող սիրուց չի կամենում անգամ ցոյց տալ իր դիցունուն, թէ ինքը նրան սիրում է, այլ տանջանքով լի սէրը սրտում այս կերպ է պահում.—

«Ես լուռ եմ լինում. բայց թէ քո աչեր

«Հոգուս խորքերը թափ անցանէին՝

«Դու կը տեսնէիր, թէ ի՞նչ զգացմունքներ

«Այնտեղ բորբոքուած, կուտակուած էին...

Ապա բանաստեղծը նկարագրում է իր կրած տանջանքն ու գիշերուայ աղօթքը.—

«Ահա հասնում է և խորին գիշեր.

«Դու ճաշակում ես հանգիստ անխոռով,

«Իսկ ես քուն չունիմ և երկար ժամեր

«Անցնում եմ խաղաղ, բայց անուշ ցնորքով.

«Պատկերդ առաջիցս էլ չէ հեռանում,—

«Որին գիշերով աղօթքի համար

«Քունս մոռացած, ես վեր եմ կենում.

Այդ տեսակ նուիրական թռիչքներ ունի նահապետ. Քուչակը. \*) նա իր մի երգում իր սիրունու սէ-

\*) Նահապետ-Քուչակի ոտանաւորները գրական ոճի վերածել է Հրանտ Ասատուրը:

ըին այսպէս է գոհարերուում .-

«Իմ նունուֆար, ջրի գերի,

«Որ ծաղկելես ջրի միջում.

«Ջրի ափից՝ ինչպէս ուրի՝

«Քեզ եմ նայում ու գողգողում:

«Օ՛, կը կտրեմ ես քո ջուրը,

«Որ՞նչարէզ վեր դու ցամաքիս.

«Բանամ աչքիս յորդ աղբիւրը,

«Քեզ ջրեմ, որ նորից ծաղկիս:

Սիրոյ երգի մէջ Յ. Յովհաննիսեանին մեր լիբիկ գրողների մէջ հասնում է միմիայն շանթահարող պոյէտ՝ Պետրոս Դուրեանը:

Այժմ անցնենք այն երգերին, որ Յ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւնների գոհարներն են կազմում, որպիսի երգերով և հիմք դրուեց ժողովրդական ոգով բանաստեղծութեան, և որոնք ծառայեցին իբրև օրինակ առաջ գալու այդ մօտիւով երգողներին, ինչպէս Ա. Իսահակեան, Յովհ. Թումանեան, Յովհ. Կոստանեան մասամբ և Շուշ. Կուրղինեան. այդ գոհարները պոյէտի ժողովրդի ոգով-ոճով հիւսած երգերն են. դրանք շատ չեն, ընդամենը 10—12 հատ, բայց այնքան անուշ ոճով, խորը, զմայլիչ ոգով, որ երբ ձեռք ես առնում կարդալու՝ չզիտես հիանաս, թէ չը հաւատաս այն բանին, որ բարձրագոյն կրթութիւն ստացած, նոր ճաշակով զարգացած մի լիբիկ բանաստեղծ կարող կը լինի այդպիսի բանաստեղծութիւններ հիւսել, որպիսի հիւսուածքը միմիայն ժողովրդին է յատուկ:

Այդ երգերը պէտք է բաժանել երկու կարգի. 1. արդի կեանքի, 2. բալլադաներ:

Արդի կեանքի երգերից թէև առաջինը չէ գրուել «Արագն եկաւ», սակայն առաջին տեղը բռնում է սա. այդ երգը իր կառուցուածքով հասնում է կատարելութեան. դա մի հարմոնիա է, մի մուզիկ, որ կա-

սես ինքն իրեն է ասուում ու երգում. տեսէք, թէ ինչպէս սիրաբորբոք երիտասարդը ջրերի ափին ոլորմուր ման է գալիս և իր դարդն ուզում է մի տեղ թաղել, այն դարդը որ յատուկ է ամեն մի դեռահաս երիտասարդի, նրա եարի դարդը, որպիսի դարդի մասին հիւսուած են մեր բոլոր ժողովրդական երգերը. տեսէք, որքան մուզիկ կայ նրա երկրորդ մանաւանդ երրորդ տան մէջ.—

«Ամպերն | ընկան | Մասիս | սարին

«Կարօտ | փնացի | ես իմ | եարին,

«Աստուած՝ | սիրես | էրուած | սրտիս

«Ջուղանք | բերես | էկող | տարին:

Տեսէք հատածները, շեշտերը, բաժանումները. նա ոչ միայն թուականով—այն է արդի տաղաչափութեան օրէնքներով—կարելի է կարդալ, այլ և նախկին՝ չափական կանոններով, այնպէս, ինչպէս հնումը գրուում-կարդացում էին մեր բոլոր տաղերն ու շարականները:

Բայց աւելի սիրուն, խորը է Յ. Յովհաննիսեանի «Նոր-գարունը», որին պոյէտը տուել է իր ամբողջ հոգին ու սիրտը. նա բողբոջելով անտարբեր բնութեան դէմ, որ չզիտէ աւեր-արտասուք, այլ իր կանոններով հղովում է իր ընթացքով, պոյէտը կարողանում է ցոյց տալ հայ ժողովրդի վիշտն ու տառապանքը, այն արիւննոտ օրերը, երբ՝

«Սև-մութ պատեց աշխարհին,

«Սար ու ձոր դառան արին,

Երբ՝ «Բիւլբիւլն եկա՛ վարդ չունի,

«Ծաղկոցը կայ՝ զարդ չունի.

«Էլ ո՛վ ա, որ դարդ չունի.

Աղա հարցնում է.—

«Ո՞ւր ես գալիս, այ գարուն».

Ու աւելացնում.—

«Գովքըդ ասող չը մնայ,

«Զճճւր ես գալի, այ գարուն».

Պոյէտը ինքը բուն ժողովրդի հարազատ գաւակը լինելով որքան մտաւոր կըթուփեամբ առաջ է գնացել, սակայն, դարձեալ չէ մոռացել իր գեղջուկին, չէ խզել իր սրտի, հոգու և մտքի կապերը նրա հետ. պոյէտը նրա ուրախութեամբ ուրախացել է, տըխրութեամբ լացել, երգել-խօսել է նրա լեզուով ու զգացմունքով. ահա այդտեղ է մեր իսկական ազգային պոյէտին, ազգային ոգին ու ոճը, ինչպէս և ըստ տեղին նկատում է Մինաս Բերբերեանը:

Նոյն ոճով, նոյն թափով, թէ և այլ նիւթի մասին, գրում է նա «Ալազեազ բարձր սարինը», որ ոչընչով չէ զանազանում դարերով ժողովրդի բերանում մշակուած ու կոկուած երգերից. այստեղ երգելով ազիզի—հարի սէրը, և տեսնելով, որ «Կատարին ձին դրած» սարերը ճամբայ չեն տալիս եարին հասնելու՝ ղշին է դիմում.

«Էն ինչ դուռ ա էն քարին...»

«Սիրտս կաթում ա արին,

«Ա՛յ իմ թառլան, թե տուր ինձ,

«Թունեմ, հասնեմ իմ եարին»:

Այս երգի կողքին պէտք է գնել սիրուն «Ա՛յ վարդ աղջիկը», որ այնքան հակիրճ ոճով ու գրաւիչ մտքով գրուած բանաստեղծութիւն է:

Ժողովրդա-բանահիւստութեան մէջ նրա «Աշուղն» արդէն աշուղի մասին եղած իսկական կարծիքի բովանդակութիւն է, որ ըմբռնուած, հասկացուած է ժողովրդի մէջ. այդ երգն այնպէս է արտայայտած՝ ինչպէս կարող էր արտայայտել բնածին ժողովրդական մի

աշուղ, բարձր լիրիկայով. այստեղ մենք տեսնում ենք ժողովրդի ոճը, ոգին, միտքը, նրա պարզութիւնն անպաճոյճութիւնը, միևնոյն ժամանակ նրա ցաւն ու մըտածմունքը ժողովրդի, որ տածում է իր միտքը զէպի աշուղը.—

«Ասի՛ աշուղ, առ չունգուրդ, մեզ բան ասս սըրտալի.

«Կարօտ են քու անուշ ձէնին, մի բան ասս սըրտալի.

«Սրտի խօսք ենք ուզում քեզնից, որ վեր հանէ մեր հոգին—

Ա՛ն չունգուրդ, դարդոտ աշուղ մեզ բան ասս սրտալի:

«Լուռ մնալով մեր՝ վերքերին դու չես անի դեղ դարման. «Արար-աշխարք գիտի՛ չըկայ մեր դարգերին չափ, սա՛ման».

«Մնջութիւնն էլ հօ նշան չի՛ մի գովելի յատկութեան—

«Ա՛ն չունգուրդ, մեզ բան ասս, թող խօսքդ ընի ցաւալի:

«Ա՛ն չունգուրդ, տուր լարերին, կրակ վառիր մեր սրտում,

«Մեզ ամենիս նոր շունչ տուող մի բան ասս սրտալի:

Միթէ այդ նոյն պահանջը չէին լրացնում մի ժամանակ մեր գողթան երգիչները, երբ ոչ գիր կար, ոչ գրականութիւն, ոչ պատմութիւն կար, ոչ լրագիր. նրանք սագերն ու չունգուրները վզերը գցած թափառում են հայ ժողովրդի մէջ, լրացնում էին գրի ու պատմութեան պակասը. տեսնում էին մի տեղ դըժբաղդ զէպը՝ երգով այդ զէպը հաղորդում էին մի ուրիշ տեղ. լսում էին մէկի քաջութեան մասին՝ այդ հերոսին իրենց դովքի առարկան դարձրած՝ տարածում էին ամենուրեք. այդ ոգով էին նրանք երգում, գոր-

ծում: «Աշուղ» բանաստեղծութիւնը մի աւելորդ անգամ ևս ապացուցանում է, թէ պոյէտը որքան խորը ըմբռնել է հայ ժողովրդի ոգին ու դառել նրա իսկական արտայայտիչը. դեռ աւելին չասենք՝ Յ. Յովհաննիսեանը իր «Քեզ ըսպասող չմնաց» երգով մի գողտրիկ գուսան է. հայրենի վէրքերը մրմոացող գուսան.

«Աշուղի բերանը փակ,  
«Սաղ-քեամանչէն փակի տակ,  
«Միրտն ա էրոււմ անկրակ—  
«Ո՞ւր ես գալի ա՛յ գարուն:

Յ. Յովհաննիսեանն ունի 2 միատեսակ ոտանաւոր, վերցրած գիւղական կեանքից, որոնք խիստ պատկերաւուն դուրս են բերում հայ գեղջուկի դարդը ու յոյսը, կեղեքումն ու աղքատութիւնը. դրանցից մէկը «Գիւղի ժամն» է, որ սկսւում է «Տան-դօ, տան-դօ» ղօղանջով, միւսը՝ «Հատիկը», գեղջուկի այն յոյսը, որ լի հաւատով՝

«Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ.  
«Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,  
«Թող դարդս մեռնի գետնի տակ անհետ,  
«Դու ինձ մխիթար կրկին տուն դարձիր:

Նա դրա համար, որ հատիկը կանաչի տուն գայ, իր գաւաղներին ապրուստ տայ, Տիրամօր առջև ջերմ աղօթքով մոմ է վառելու, խունկ է ծխելու. բայց եթէ պատահի, որ իր մեղքերի համար արժանի չլինի Տիրամօր կողմից առատ անձրևի՝ այն ժամանակ

« . . . Ծով կը դարձնեմ

«Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,  
«Որ քեզ իմ հատիկ ծարաւ չթողնեմ:

Իսկ «Գիւղի ժամի» միջի 3—4 տունը՝  
«Ա՞խ, Նազրու ջան, չես իմանում—  
«Էգուց էլի աղան կը գայ,

«Նորա սիրտը՝ միշտ անկշտում,  
«Է՛լ ամպի պէս՝ պիտի դռայ.  
—«Շուտով, Գրիգոր փողերը բեր...  
«Էլի չկա՛յ. կո՛վդ հանի...

Մի կատարեալ դրամա է:

Նա, ով գիւղացի է, կամ ապրել է գիւղի կեանքով, տեսել է գեղջուկի սուղ վիճակն ու վաշխառուից հարըստահարուող կեանքը՝ նա կըզգայ, թէ որքան ճշգրիտ, արտայայտիչ են այդ երկու բանաստեղծութիւնները:

Ժողովրդական մոտիվով գրուած բանաստեղծութիւնների շարքում են «Արտաւազդը», «Լուսաւորչի կանթեղը», և «Վահագնի ծնունդը»:

Այդ բալլադաները գրի են առել և մեր միւս բանաստեղծները, սակայն ոչ ոք այնպէս ճարտար, այնպէս գեղարուեստօրէն և մտքի կողմից, այսպէս ասած, այնպէս հիւթալի չեն դուրս բերել, ինչպէս Յ. Յովհաննիսեանը. մեր միւս գրողները վերցրել, գրի են առել միմիայն նիւթի շօշափելին, իսկ Յ. Յովհաննիսեանը այդ շօշափելիին տուել է և հոգի, միտք. վերցրէք, «Լուսաւորչի կանթեղը», նրա լու աւանդական մասը նկարագրելուց յետոյ՝ բանաստեղծը շունչ է դնում նրա մէջ.—

«Այդ մեր հոգու լուսոյ ջահն է նուերական,  
«Ողջոյն ազգի կենդանութեան երաշխիք:  
«Եւ այդ ճրագն, եղբայր, անշէջ կըլինի՝  
«Քանի վառող Աջն է մեզ միշտ հովանի:

Նոյնը և «Արտաւազդի», այդ հայկական Պրոմօթէոսի մէջ, բանաստեղծը գեղարուեստօրէն նկարագրելով պատմութիւնից մեզ մնացած Գողթան երգերի այդ բեկորը՝ դարձեալ իր ոգին դնում է նրա մէջ.

«Արտաւազդ, վերջ չունի հոգուդ տառապանք,  
«Եւ դեռ շատ հեռու է վախճանն աշխարհի:

«Մենք սպասում ենք դեռ գեղեցիկ օրեր,  
«Ինչ հաշտ է երկինքը մեզստ աշխարհին.

«Բայց եթէ քարացած մենք չենք լսելու

«Նոր կեանքի կոչն հովհուր, և վերածնութեան

«Սրբարար աւագան մեզ մեզ չի փրկելու,—

«Արտաւագդ, փշրուի թող մեր կուռ կուան.

Սակայն քիչ յետոյ խորհրդածելով՝ դառնում է.—

«Բայց ոչ. հաւատում ենք դեռ մենք փրկութեան,

«Մեզ մի նոր երկնքից նոր լոյս կը բացուի,

«Եւ տեսնում ենք ահա արդէն ծիածան

«Մենք ազատ, լուսաւոր մի նոր վիճակի...

«Զարկեցէք, դարբիններ, կուանը սալին...

Իսկ Վահագնի ծնունդը՝ մի ամբողջութիւն է, որը հազուագիւտ է մեր գրականութեան մէջ, այնքան որ հարագատ է նա և պատկերաւուն դուրս բերուած պոյէտի մակ:

Այդ ժողովրդի մտիւնով գրուած երգերը սերունդներ դաստիարակող գոհարներ են, որ երկար մնալու են մեր գրականութեան մէջ:

Յովհ. Յովհաննիսեանն երբ սկսեց երգել՝ ինչպէս ասացինք՝ դա մի անցողական շրջան էր, որ իբրև կամուրջ ձգուած էր հնի և նորի մէջ. այս հանգամանքից արդէն ինքըստինքեան յայտնի պիտի լինի, թէ ինչ մտաւորներով կարող էին լինել այդ ժամանակուայ երգուած երգերը. այդ մենք տեսանք իր տեղում. այժմ տեսնենք, թէ ինչ տեսակ լեզուով պոյէտը հիւսել է իր երգերը:

Այս—լեզուի—մասում արդէն ժամանակը ազդեցութիւն չունի, կամ համարեա չունի պոյետի համար. ճիշտ է, տեղ-տեղ մենք պատահում ենք գրաբար դարձուածքների ա լա Ս. Շահագիրդ, հորովների ու խոնարհումների գրաբար ձևերի, սակայն զրանք աւելի յան-

գերի համարեն. բայց մի բան որ յատուկ է Յովհ. Յովհաննիսեանին և իսկոյն ունեւ կերպով, աչքի են ընկնում, դա պոյէտի ոճն է, ոլորուն ոճը, որ այնքան ճկուն կերպով դուրս է գալիս նրա գոչի տակից. իր ոճաբանութեամբ Յովհ. Յովհաննիսեանը մի մեծ յեղաշրջում կատարեց հայ լեզուի մէջ և ապացուցեց, ինչպէս ըստ տեղին վկայում է Գր. Վանցեանը, որ հայ լեզուով կարելի է բանաստեղծել առանց արտասուելու և առանց սգալու:

Նա զբանով ուսուցիչ հանդիսացաւ իրեն աշակերտող սերնդի համար և նոր շունչ, նոր կեանք ներարկեց մեր գրական մատաղ լեզուին, պահպանելով արարատեան բարբառի ոգին և հարազատութիւնը:

Նախքան օրինակներ բերելը մի քանի տողով յիշենք պոյետի մասին եղած կարծիքներից մի-երկուսը.—

1. Ս. Մանդինեան. չես իմանում արդե՞ք զարմանամ բանաստեղծի ծրուոյ տաղանդի վրայ, թէ՛ նրա գրական լեզուի շքնաղութեան, ոյժի և համարձակ ճաշակաւոր արտայայտութեան վրայ:

2. Մկրտ. Բարխուդարեան.—Ժամանակակից բանաստեղծների մէջ ոչ ոք չունի այդպիսի սահուն և ոլորուն բանաստեղծական ոճ, ինչպէս Յ. Յովհաննիսեանը:

3. Վրթ. Փափաղեան.—Յ. Յ-ի լեզուն շքեղ է և ճոխ. առանձնապէս նա մեծ ուշադրութիւն է դարձնում գրելու արուեստի կիրառութեան և քերթողական ոճի բարձրութեան վրայ:

4. Աղ. Քալանթար.—Այդ բոլորը գրուած է ազատ գրչով, որ չէ վարանում բառեր գտնելու, իր սըրտի զեղմունքը արձանագրելու: Յովհ. Յովհաննիսեանի լեզուն հարուստ է բառերով, դարձուածքներով և ընտիր նախադասութիւններով:

Բաւականալով այսքան օրինակներով՝ դրա վրայ պէտք է աւելացնենք, որ Յ. Յովհաննիսեանի յանգերը ձոխ են, հիւսուածքը զեղուն, ոչ բռնասքօսիկ, մտքերի արտայայտութիւնը կատարուած գեղարուեստօրէն, բառերի արտայայտութիւնը ոլորուն, նրանց շարայարութիւնը կլասիկ ձևով: Ճիշտ է, Յովհ. Յովհաննիսեանը հարուստ չէ ոտանաւորների ձևերով, ինչպէս Դուրեանը, և այլ տաճկահայ գրողները, նրա երգերը ըստ մեծի մասին 8-ն ոտեանն ու 10 տասն ոտեան են, սակայն շատ ձևուն և շատ ներդաշնակ: Բերենք օրինակներ.—

1. Եւ անձրևը ծաղկապսակ վառ փնջերի:
2. Զերմոցում սնուած դու վարդ նազելի:
3. Դու ինձ համար շունչ էիր գարնան:
4. Թող երգդ հնչէ, որպէս վտակ կարկաչուն,
- Որ սահում է մեղմ յորձարքով արծաթի:
5. . . . և արմաւենին

Սուրբ ազատութեան՝ դողդոջուն ձեռքում՝

Բազմն է մօտենում մատաղ սերնդին:

Եւ անեղ կուում արիւն-քրտինքով

Վաստակած անմահ աճում է դափնին:

Փրկութեան ոտը դեռ չէ կանաչում,

Կրծքիցդ հոսած արեան շիթերից

Գո տանջանքների փունջն է ցօղում:

Փրկութեան աստղը վառում է ձակտիդ:

6. Թէ Աստուած ինձ պիտի մահը տայ՝ թող մօտ  
գամ,

Վզովդ ընկնեմ, քեզ համբուրեմ մի անգամ,

Թող ապրշում մազերովդ ինձ կախ տամ,

Բնաւ մի կեանք էլ չի հասնի այդ մահին:

Իսկ «Կուզէի լինել» երգը պոյետի մի կատարելատիպ է հիւսուածքի, մտքի զեղունութեան ու սաւառման. առաջ բերենք այդ գոհարը ամբողջովին.—

«Կուզէի լինել կարկաչուն վտակ,  
Վճիտ ալիքը դրախտի բուրմունքով,  
Եւ առաւօտեանն, ինչպէս ցօղ յստակ,  
Երեսդ ոռոգել գոհար շիթերով:

Կուզէի լինել սօսի հովասուն,

Համարձակ փռուած կանաչ սաղարթով,

Եւ միջօրէին այդ դէմքիդ սիրուն

Հովանի լինել հեղիկ շրշիւնով:

Կուզէի լինել ծաղկոցում բացուած

Քաղցրաբոյր մի վարդ, երկնից արժանի,

Եւ սիրոյ ժամին, խանդիցս արբած,

Զարդարանք լինել կուժքիդ գեղանի:

Եւ շող դառնալով գարնան արևի՝

Կուզէի պայծառ աչերումդ վառուել,

Կամ ինչպէս քնքուշ ոսկեվառ գօտի

Զքնաղ իրանիդ փաթաթուել, փարել:

Լուսափայլ աստղիկ կ'ուզէի դառնալ,

Քաղցր մանկան պէս ծիծաղն երեսին,

Ինչպէս ադամանդ շողշողել, ցոլալ,

Ո՛վ իմ թագուհի, քո բաց ձակատին:

Կուզէի լինել լուսին ամօթխած,

Արծաթի փայլով մազերդ շոյել,

Այտերդ գգուել, սիրուց բորբոքուած,

Դողդոջ շրթունքիդ համբոյրներ դրոշմել:

Կուզէի լինել սիրահար սոխակ,

Եւ ձեռիդ գերի, վանդակում փակուած,

Ականջիդ հնչել հրաշալի նրբագ,

Մեղմ օրօր ասել քո հոգուն զմայլուած:

Եւ կախարդական տաճարում կանգնած

Կուզէի տեսնել ես քեզ Անահիտ,

Եւ փրկրպագել, առաջիդ չոքած,

Սուրբ գեղեցկութեան անմահ տիպարիդ:

Եւ այժմ արդէն տիրապետող կարծիք է, որ Յ. Յովհաննիսեանը ոճաբան է, մեզ լեզու սովորեցնող:

Գալով բանաստեղծութեան արդի օրէնքներին՝ պէտք է ասենք, որ պոյէտը մի շարք ոտանաւորներու մէջ հետեւել թուական գրութեան կանոններին, ինչպէս իրեն ժամանակին չեն հետեւել Գամառ-Քաթիպան, Ս. Շահազիզ և ուրիշները. այդ կանոնները մըշակուած են և գործադրուած են այժմ մեր մի քանի բանաստեղծների ձեռքով, ինչպէս օր. Սիմ. Բարեան, Ու. Անտփեան, և այլք: Այստեղ պէտք է նկատել, որ տաճկահայ պոյետների մէջ այդ անճշտութիւնը ոչ մի տեղ չենք պատահում:

Օրինակ, «Նոր-գարուն»-ի մէջ Յ. Յովհաննիսեանն այսպէս է հիւսում 6-րդ տունը.

«Աշուղի բե | բանը փակ,

«Սազ քեամանչէն | փակի տակ:

Այստեղ բերան բառը ընկել է երկու հատածի մէջ, կիսուել է, որ թոյլատրելի չէ և մեծ շեղումն է օրէնքից:

Իսկ հատածների վերջին վանկերը շատ յաճախ վերջացնում է իզական վանկերով.

օրինակ՝ «Որպէս յաղղանդամ | մի ծերուկ հսկայ

«Կախուած է ժայռը | ջրերի վրայ:

Ը-ն իզական վանկէ, շեշտ ընդունել չի կարող: Հատածի վերջին վանկի հարմոնիան պահանջում է, որ արական վանկ լինի (շեշտաւոր):

Իերենք օրինակներ Գամառ-Քաթիպայից.—

«Քանի որ իմ | գաւակունք,

«Այդպէս կու մ'ը' | նան պանդուխտ:

Կրկնակի թերութիւն. թէ մ'ընան բառն է կիսած երկու հատուածի մէջ և թէ իզական վանկը ընկել հատի վերջը:

o. . . ճշ

«Մայր Արաքսի | ափերով,

«Քայլամուր | գնում եմ».

Նոյնպէս իզական եմ վանկը ընկել է հատածի վերջը:

Կարելի էր մի շարք օրինակներ բերել մեր միւս պոյէտների սխալներից, սակայն բաւականանանք այդքանով և ամփոփենք կամ ձիշտը բնորոշենք մեր ասածը.—

Յովհ. Յովհաննիսեանը իր սկզբնական տատանումներից յետոյ կանգնեց ամուր հողի վրայ՝ սէր և գաղափար երգելու, չարութեան դէմ մարտահրաւէր կարդալու. նրա երգերը գնացին բերնէ-բերան և նա ճանաչուեց մեր ազգային լիրիկ և ժողովրդական (ժողովրդի լեզուով ու նրա ոգով երգող) պոյէտը. նա մեր նորագոյն բանաստեղծութեան ուսիվիրան, վետերան է. Յ. Յովհաննիսեանն իրենով ստեղծեց գրելու նոր շիւղա և նոր հոսանք, տուեց մեզ ձոխ լեզու և ոճ, գրելու, արտայայտելու մեր մտքերն ու զգացմունքները:

Յովհ. Յովհաննիսեանը սիրոյ և գաղափարի երգիչ է, սգաւոր տոնով:

1939 Գ.  
P. ԱԿՏ № 026/116  
ԴԿՈՒԹ

The first part of the paper is devoted to a general  
 consideration of the subject, and to a statement of the  
 objects of the present inquiry. It is then divided into  
 three parts, the first of which is devoted to a  
 description of the various species of the genus  
 and to a statement of their geographical distribution.  
 The second part is devoted to a description of the  
 habits and manners of the various species, and to a  
 statement of their uses to man. The third part is  
 devoted to a description of the various diseases  
 to which the various species are subject, and to a  
 statement of the means of preventing and curing  
 these diseases. The paper concludes with a  
 summary of the results of the present inquiry, and  
 a statement of the author's conclusions.

MS. A. 1. 1. 1. 1. 1.





356

0014179

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0014179

